ԳԱՆԱՏԱՀԱՅՈՑ ԹԵՄ DIOCÈSE ARMÉNIEN DU CANADA

# ԿԱՆԹԵՂ

ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ

GANTEGH BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MOTRÉAL

*ԿԻՐԱԿԻ, 27 Հոկտեմբեր 2019* | 134 | *DIMANCHE, 27 Octobre 2019*

## ՏՕՆ ԳԻՒՏ ԽԱՉԻ



615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2
Website: www.saintgregory.ca / E.mail: saintgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

## Է Կիրակի Զկնի Սրբոյ Խաչին

## *7[ÈME] DIMANCHE APRÈS LA SAINTE CROIX*

### Աստուածաշունչի Ընթերցումներ

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ
ԳՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ (1.18-24)

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ (24.27-36)

**Les lectures de la Bible d'aujourd'hui**

1 CORINTHIENS 1.18-24
MATTHIEU 24.27-36

Պատարագիչ եւ քարոզիչ՝
ԱՐԺ. Տ. ԴԱՒԻԹ. ՔՀՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

Célébrant:
RÉV. PÈRE DAVID MARGARYAN
Prêtre Paroissial

Առաւօտեան Ժամերգութիւն - ժամը 9:30-ին
Office Matines à 9h30
Ս. Պատարագ ժամը - 10:30-ին
La Sainte Messe à 10h30
Հոգեհանգիստ ժամը - 12:30-ին
Requiem à 12h30

DIACRES – ACOLYTES

*Chef de choeur: M. Sarkis Barsemian*
*Organiste: Mme Houry Bedrossian*

# ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

**LES LECTURES DE DIMANCHE**



**THE SUNDAY READINGS**

## 1 ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ 1.18-24

18Արդարեւ խաչին քարոզութիւնը յիմարութիւն է անոնց
համար՝ որ կը կորսուին, իսկ մեզի համար՝ որ փրկուած ենք՝
Աստուծոյ զօրութիւնն է:19Որովհետեւ գրուած է.
«Իմաստուններուն իմաստութիւնը պիտի կորսնցնեմ, ու
խելացիներուն խելքը պիտի ջնջեմ»:20Ո՞ւր է իմաստունը, ո՞ւր է
դպիրը, ո՞ւր է այս աշխարհի վիճաբանողը. միթէ Աստուած
չյիմարացո՞ւց այս աշխարհի իմաստութիւնը: 21Արդարեւ՝ քանի
աշխարհը իր իմաստութեամբ չճանչցաւ Աստուած՝ անոր
իմաստութեան մէջ, Աստուած բարեհաճեցաւ քարոզութեան
յիմարութեամբ փրկել անո՛նք՝ որ կը հաւատան. 22որովհետեւ
Հրեաները նշան կը պահանջեն, եւ Յոյները իմաստութիւն կը
փնտռեն, 23իսկ մենք կը քարոզենք խաչեալ Քրիստոսը,
գայթակղութիւն՝ Հրեաներուն, ու յիմարութիւն՝ Յոյներուն.
24բայց անոնց որ կանչուած են, թէ՛ Հրեաներուն եւ թէ
Յոյներուն, Քրիստոսը՝ Աստուծոյ զօրութիւնը եւ Աստուծոյ
իմաստութիւնը

## ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 24.27-36

27Քանի որ ինչպէս փայլակը կ’ելլէ արեւելքէն ու կ’երեւնայ
մինչեւ արեւմուտք, ա՛յնպէս պիտի ըլլայ մարդու Որդիին
գալուստը: 28Որովհետեւ ո՛ւր որ դիակ կայ, հո՛ն պիտի
հաւաքուին արծիւները»: 29«Եւ այդ օրերու տառապանքէն
անմի՛ջապէս ետք՝ արեւը պիտի խաւարի ու լուսինը պիտի չտայ
իր փայլը. աստղերը պիտի իյնան երկինքէն, երկինքի
զօրութիւնները պիտի սարսին, 30եւ ա՛յն ատեն մարդու Որդիին
նշանը պիտի երեւնայ երկինքի մէջ: Այն ատեն երկրի բոլոր
տոհմերը պիտի հեծեծեն, ու պիտի տեսնեն մարդու Որդին՝ որ
կու գայ երկինքի ամպերուն վրայ, զօրութեամբ ու մեծ փառքով:
31Եւ ան պիտի ղրկէ իր հրեշտակները բարձրաձայն փողով, ու
պիտի հաւաքեն իր ընտրեալները չորս հովերէն, երկինքի մէկ
ծայրէն մինչեւ միւս ծայրը»: 32«Թզենիէ՛ն սորվեցէք առակ մը.
երբ անոր ոստերը կակուղնան եւ տերեւները ցցուին՝ կը
հասկնաք թէ ամառը մօտ է: 33Նո՛յնպէս դուք՝ երբ տեսնէք այս
բոլոր բաները, գիտցէ՛ք թէ մօտ է՝ դռներուն քով:
34Ճշմա՛րտապէս կը յայտարարեմ ձեզի. “Այս սերունդը պիտի

չանցնի, մինչեւ որ այս բոլոր բաները ըլլան”: 35Երկինք ու երկիր
պիտի անցնին, բայց իմ խօսքերս բնա՛ւ պիտի չանցնին»:
36«Իսկ այդ օրն ու ժամը՝ ո՛չ մէկ մարդ գիտէ, ո՛չ ալ երկինքի
հրեշտակները, հապա՝ միա՛յն իմ Հայրս:

## 1 Corinthiens 1.18-24

18Car la parole de la croix est une folie à ceux qui périssent; mais à nous qui obtenons le salut, elle est la vertu de Dieu.

19 Vu qu'il est écrit : j'abolirai la sagesse des sages, et j'anéantirai l'intelligence des hommes intelligents.

20 Où est le sage? où est le Scribe? où est le Disputeur de ce Siècle? Dieu n'a-t-il pas manifesté la folie de la sagesse
de ce monde? 21Car puisqu'en la sapience de Dieu, le monde n'a point connu Dieu par la sagesse, le bon plaisir de Dieu a été de sauver les croyants par la folie de la
prédication. 22 Car les Juifs demandent des miracles, et les
Grecs cherchent la sagesse. 23 Mais pour nous, nous prêchons Christ crucifié, qui est un scandale pour les Juifs,
et une folie pour les Grecs. 24 A ceux, dis-je, qui sont appelés tant Juifs que Grecs, [nous leur prêchons] Christ, la puissance de Dieu, et la sagesse de Dieu.

## Matthieu 24.27-36

27 Mais comme l'éclair sort de l'Orient, et se fait voir jusqu'à l'Occident, il en sera de même de l'avènement du Fils de
l'homme. 28Car où sera le corps mort, là s'assembleront les aigles.

29 Or, aussitôt après l'affliction de ces jours-là, le soleil deviendra obscur, et la lune ne donnera point sa lumière, et les étoiles tomberont du ciel, et les vertus des cieux
seront ébranlées. 30 Et alors le signe du Fils de l'homme paraîtra dans le ciel. Alors aussi toutes les Tribus de la terre se lamenteront en se frappant la poitrine, et verront le Fils de l'homme venant dans les nuées du ciel, avec
[une grande] puissance, et une grande gloire. 31 Et il

enverra ses Anges, qui avec un grand son de trompette assembleront ses élus, des quatre vents, depuis l'un des bouts des cieux jusques à l'autre bout.

32 Or apprenez cette similitude prise du figuier : Quand ses branches sont déjà en sève, et qu'il pousse des feuilles, vous connaissez que l'été est proche. 33 De même quand vous verrez toutes ces choses, sachez que [le Fils de l'homme] est proche, et qu'il est à la porte. 34 En vérité je vous dis, que cette génération ne passera point, que toutes ces choses ne soient arrivées. 35 Le ciel et la terre passeront, mais mes paroles ne passeront point.

36 Or quant à ce jour-là, et à l'heure, personne ne le sait; non pas même les Anges du ciel, mais mon Père seul. 37 Mais comme il en était aux jours de Noé, il en sera de même de l'avènement du fils de l'homme.





## Հոգեւոր Հովիւի Պատգամը

**«Ապաւինեցաք ի խաչ քո Արարիչ յաւիտենից, որ ետուր մեզ պահապան յաղթող ընդդէմ թշնամւոյն. աղաչեմք սուաւ Փրկիչ պահպանեայ զանձինս մեր»**

**(Շարականագիր)**

Սիրելի հայորդիներ ի Տէր Յիսուս Քրիստոս,

Հայ Առաքելական Սուրբ եկեղեցին իր օրացոյցին մէջ Սուրբ Խաչին նուիրուած ունի չորս տօներ՝ Գիւտ Խաչի, Երեւումն Սուրբ Խաչի, Վարագայ Սուրբ Խաչի եւ Խաչվերաց:
Խաչի գիւտի (գտնուելու) տօնը կը նշուի Հոկտեմբեր 26-ի մերձակայ Կիրակի օրը, այս տարի Հոկտեմբերի 28-ին:
Շարականագիրը Գիւտ Խաչին նուիրուած այս շարականին մէջ կը շեշտէ Սուրբ Խաչին պահպանիչ զօրութիւնը ընդդէմ չարի:
Խաչին գիւտը տեղի ունեցաւ երկու անգամ՝ I-ին եւ IV-րդ դարերուն:

Այս թիւով կը ներկայացնենք Խաչի Երկրորդ Անգամ Գտնուելուն Դէպքը:

Երբ Խաչը երկրորդ անգամ գտնուեցաւ
313 թ. Միլանի հրովարտակով Հռոմէական կայսրութեան տարածքին մէջ քրիստոնեաներուն արտօնութիւն կը տրուի իրենց կրօնը ազատ դաւանելու: Երուսաղէմը կը դառնայ ուխտավայր, եւ ամէն կողմէ կու գան սրբազան վայրերը տեսնելու:Կոստանդիանոս կայսրին մայրը՝Հեղինէն, շատ բարեպաշտ կին էր, եւ Աստուած անորն մեծ պատիւի արժանացուց: Օր մը տեսիլքի ձեւով Աստուած յայտնուեցաւ անոր եւ ըսաւ. «Գնա՛, գտի՛ր Քրիստոսի Խաչափայտը եւ այդ

վայրին մէջ տաճար կառուցէ՛»: Հեղինէ թագուհին 327թ-ին կու գայ Երուսաղէմ եւ մեծ ջանքեր գործադրելով՝կը ջանկանայ գտնել Քրիստոսի Խաչը: Խաչափայտին տեղը յայտնի էր միայն Յուդա անունով  Հրեայի մը, որ իր նախնիներուն գրաւոր աւանդութիւններէն գիտէր խաչերուն թաղման վայրը: Սկիզբը ան կ'ընդդիմանայ եւ վեց օր ցամքած ջրհորի յատակը քաղցած մնալէ ետք, ի վերջոյ, ցոյց կու տայ խաչերուն թաղման տեղը: Փորելով՝անոնք կը հանեն աղբի տակէն, ուր կը գտնուի նաեւ Պիղատոսի հրամանով Յիսուսին գլխավերեւը ամրացուած եռալեզու տախտակը, որ սակայն, պոկուած էր խաչէն: Քրիստոսի խաչը կ'որոշուի կատարուած հրաշքներու շնորհիւ. Խաչափայտին հպումէն կը կենդանանայ  մեռած  պատանի մը եւ հիւանդութիւններէն կը  բժշկուի մահամերձ  կին մը: Այդ հրաշքներու ազդեցութեամբ շատերը քրիստոնէութիւն կ'ընդունին, որոնց մէջ նաեւ Յուդան, որ հետագային կը նահատակուի Քրիստոսի անուան համար: Այդ ժամանակ Երուսաղէմի Կիւրեղ եպիսկոպոսը կը բարձրացնէ Ս. Խաչը ի երկրպագութիւն հաւատացեալներու: Հեղինէ թագուհիին կողմէ 335թ-ին Գողգոթայի մէջ կը կառուցուի Ս. Յարութիւն տաճարը, ուր կը կանգնեցուի Քրիստոսի Խաչը:

Սուրբ Խաչը ընդունելով որպէս փրկութեան եւ յաղթութեան նշան՝ իւրաքանչիւր Քրիստոնեայ Ս. Գրիգոր Տաթեւացիի խօսքերով կը դիմէ Խաչեալին՝ ըսելով. «Երբ լուսաւոր ամպերու վրայ երեւաս Հօր փառքով, Քու խաչը մեզի ապաւէն թող ըլլայ, Տէ՛ր Յիսուս: Այն ժամանակ մենք՝ Քեզի ապաւինածներս, չենք ամչնար, այլ Քու մեծ զօրութեամբ, որպէս լոյսի որդիներ, կը բերկրինք Քու աջ կողմդ: Ամէն»:

Օրհնութեամբ՝
Տէր Դաւիթ քահանայ Մարգարեան





# ՇԱԲԹՈՒԱՆ ԱՂՕԹՔԸ

## ԱՂՕԹՔ
## ՃԱՄԲՈՐԴԵԼԷՆ ՌԱՋ

Տէ՛ր, խաղաղութեան ճամբաներուն
մէջ պահէ մեր քայլերը:
Տէ՛ր, ուղղէ եւ առաջնորդէ՝ մեզ եւ
բոլոր քեզի հաւատացողները,
որպէսզի դէպի խաղաղութիւն եւ
յաւիտենական կեանք երթանք:
Կեանքի առաջնորդող եւ
խաղաղութիւն պարգեւող մեր
Աստուածը, Քրիստո՛ս, դո՛ւն
առաջնորդէ մեզ, որպէսզի
արդարութեան  քու ճամբաներէդ
քալենք եւ քու ողորմութեամբդ
հասնինք կեանքի եւ փրկութեան
նաւահանգիստը. որովհետեւ
դուն ես մեր օգնականը եւ փրկիչը:
Քեզի՛ կը վայելեն փառքը,
իշխանութիւնն ու պատիւը,
այժմ եւ  միշտ եւ յաւիտեանս
յաւիտենից: Ամէն:

## PRIÈRE AVANT DE
## PARTIR EN VOYAGE

Ô Seigneur, dirige et conduis
nos âmes et les âmes de tous
les fidèles, et fais-les marcher dans
la justice vers la vie éternelle.
Ô Christ, notre Dieu, cr.ateur de la vie
et donneur de paix,
conduis-nous afin que nous
puissions marcher dans ta justice et
parvenir au port de la vie et du salut en paix,
par la grâce de ta miséricorde.
Parce que tu es notre soutien et notre Sauveur,
et à toi reviennent la gloire, la puissance et l’honneur,
maintenant et toujours,
et dans l’éternité de l’éternité. Amen.

# ՏՕՆԱՑՈՅՑ
# ՅԱՌԱՋԻԿԱՅ ՇԱԲԹՈՒԱՆ
## *ՀՈԿՏԵՄԲԵՐ / OCTOBRE – ՆՈՅԵՄԲԵՐ / NOVEMBRE*

28, Երկուշաբթի - Տօն Սրբոցն Անաստասայ քահանային, Վարոսի, Թէոդիսեայ եւ որդւոց նորա եւ որք ընդ նմա կատարեցան:
Lundi 28 – Fête des Saints prêtres Anasdase, Varos, Théotide et de leurs enfants qui oeuvrèrent avec eux

29, Երեքշաբթի - Տօն Սրբոց Հիպէրիքեանցն որք ի Սամոսատ կատարեցան
Տօն Սրբոցն Սեւերիանոսի Սեբաստացւոյն, Բաբելայ ծերոյն եւ 84 աշակերտաց նորին:
Mardi 29 - Fête des Saints Hibériques qui oeuvrèrent à Samosate

30, Չորեքշաբթի – Պահք:
Mercredi 30 - Jeûne.

31, Հինգշաբթի - Տօն Սրբոյն Յովհաննու Ոսկեբերան Հայրապետին:
Jeudi 31 - Fête du Saint Patriarche Jean Chrysostome

## Նոյեմբեր/Novembre

1, Ուրբաթ - Պահք:
Vendredi 1 - Jeûne.

2, Շաբաթ – Տօն Ամենայն Սրբոց Հնոց եւ Նորոց, յայտնից եւ անյայտից:
Samedi 2 – Fête de Tous les Saints, anciens ou nouveaux, Connus et inconnus.

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ

SERVICE POUR LE REPOS DE L'ÂME

SERVICE FOR THE REPOSE OF SOUL

# ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ
# ԿԻՐԱԿԻ, 27 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2019

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՇՏՕՆ ՊԻՏԻ ՄԱՏՈՒՑՈՒԻ
ՄԵՁՄԷ ԱՌ ՅԱԻԷՏ ԲԱԺՆՈՒԱԾ
ՏԻԿՆԱՆՑ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ
ԱՆԴԱՄՈՒՀԻՆԵՐՈՒ ԱՆՄՈՌԱՑ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ԵԻՆԻԿԷ ԳԱՐԻՊԵԱՆ
ՍՕՖԻ ՊԷԼԿԻՆ
ԻՍԿՈՒՀԻ ՀԱՋԱՐԵԱՆ
ՀԱՅԿՈՒՀԻ ԿՈՒՏՍՈՒՋԵԱՆ
ԱՆՆԻԿ ԱԴԱՄՕՂԼՈՒ
ՍԻՐԱՆ ՄԱՆՈՒԿԵԱՆ
ԷԼԻԶ ԹԱՇՃԵԱՆ ԱՐԱՊԵԱՆ
ՇՈՒՇԱՆ ԲՐՈՒՏԵԱՆ
ԱՐՇԱԿՈՅՍ ՄՈՒՐԱՏԵԱՆ
ԼԻՒՍԻ ՓԵԼԹԷՔԵԱՆ
ՄԵՐՍԵՏԷՍ ՍԱՐԱՖԵԱՆ
ԼԻՒՍԻ ԳԱՄՊՈՒՐԵԱՆ
ՋԱՐՈՒՀԻ ՀԱՐՄԱՆՏԱՐԵԱՆ
ՌԵՊԵՔԱ ԹԱՇՃԵԱՆ
ՎԱՐԴՈՒՀԻ ՀԱՃԻԳԼՋԵԱՆ
ԱՐԱՔՍԻ ԿՐԷՅՍ ՇԻՐՈՅԵԱՆ
ՍԻՒԶԱՆ ԷՍՍԷՆ
ՌՕԶ ԹԱԹԻԿԵԱՆ
ԱՆՆԱ ՊԵՏԻՐԵԱՆ-ՊԵՏԵԻԵԱՆ
ՄԱՆՆԻԿ ՄԵԼԻՔԵԱՆ
ՄԱՅՏԱ ՑՆԾԱԼԵԱՆ
ԱՆԳԻՆԷ ՇԱՔԱՐԵԱՆ
ԱՆԱՀԻՏ ԹԱԹԷՈՍԵԱՆ
ԱՐՓԻՆԷ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
ՀՌԻՓՍԻՄԷ ՔԷՇԻՇԵԱՆ
ԼԻՒՍԻ ՔԷՍԹԷՔԵԱՆ
ՎԵՐԳԻՆԷ ԳՐԻԳՈՐԵԱՆ
ՍԻՐԱՆՈՅՇ ՔԷՕՐՀԱՃԵԱՆ
ՄԱՔՐՈՒՀԻ ՄԸԿԸՐԵԱՆ
ԱՐՄԵՆՈՒՀԻ ՄԵԼՔՈՆԵԱՆ
ԱԼԻՍ ՊԵՏՐՈՍԵԱՆ
ՍԵԴԱ ԿՈՒՏՍՈՒՋԵԱՆ
ԲԵՐԿՐՈՒՀԻ ՉԷՕՄԼԷՔՃԻՕՂԼՈՒ

**ԱԼԻՍ ԳԱՐԱԳԱՇ**
**ՀԱՅԿԱՆՈՅՇ ԿԸՐԻՔԵԱՆ**
**ՄԵԼԻՆԷ ՇԻՐԻՆԵԱՆ**
**ՄԱԹԻԼՏ ԳԱՐԻՊԵԱՆ**
**ԱՐԱՔՍԻ ԿԱՋԵՐԵԱՆ**
**ՆԱՏԻԱ ԲՕԼԱԹ**
**ԳՈՀԱՐԻԿ ԹԵՐԶԵԱՆ**
**ԱՆԱՀԻՏ ՄԻՆԱՍՕՂԼՈՒ**
**ՀԱՅԿՈՒՀԻ ԳԱԶԱԶԵԱՆ**
**ՄԱՔՐՈՒՀԻ ԿՈՉԵԱՆ**
**ԹԷՓՕՐԱ ԹԱԹՈՒԼԵԱՆ**
**ԺՈՒՍԹԻՆ ԱՐԹԻՆԵԱՆ**
**ԱՐԱՔՍԻ ԳՕՃՈՅԵԱՆ**
**ՄԱՐԻ ԳԱՒՈՒՔՃԵԱՆ**
**ՍԻՐԱՆ ՍԻՄԻԹԵԱՆ**
**ՎՐԷԺ ԴԱՐՊԱՍԵԱՆ**
**ՔԸՄՔԸՄԵԱՆ**
**ԱՐՇԱԼՈՅՍ ՃԱՆՔՈՒԼ**
**ՍՕՆԱ ՏԷՄԻՐՃԵԱՆ**
**ԻՄԱՍՏՈՒՀԻ ՆԻԿՈՂՈՍԵԱՆ**
**ԱՆԱՀԻՏ ԷՎՐԷՆՍԷԼ**
**ԹԱԳՈՒՀԻ ՇԻՐԻՆԵԱՆ**
**ԱՐՇԱԼՈՅՍ ՄԷՆԷՆՏԵԱՆ**
**ԱՐԱՔՍԻ ՀԱՔԻՄԵԱՆ**

Տիար Արի Գարաարթինեանի,
Տիկ. Քէթի Քիրիաքիտիսի,
Տիկ. Աֆրօտիթի Հալէբլիօղլուի,
Տիար Նիքօ Քիրիաքիտիսի,
Տիկ. Էօժէնիա Նանասի,
Օրդ. Աթինա Մանթիօղլուի,
Օրդ. Քէթի Մանթիօղլուի,
Օրդ. Էֆթիմիա Գարաարթինեանի,
Տիար Քօսթա Քիրիաքիտիսի,
Տիար Լուքաս-Արման Գարաարթինեանի,
Տիար Բարասքեւաս-Այուաննիս Գարաարթինեանի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի իրենց սիրեցեալ ծնողաց եւ մեծ ծնողաց՝

**ԱԹԻՆԱ**

**ՕԶԱՆ ԳԱՐԱԱՐԹԻՆԵԱՆԻ**
**(ATHINA OZAN KARAARTINYAN)**
մահուան 3-րդ տարելիցին առիթով
**ՇԱՀՆՈՒՐ ԱՐՄԱՆ**
**ԳԱՐԱԱՐԹԻՆԵԱՆԻ**
**(SHAHNUR ARMAN KARAARTINYAN)**
մահուան 16-րդ տարելիցին առիթով

Տ. եւ Տիկ. Կարպիս եւ Սիլվա Ֆէրահի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի
կատարուի իրենց սիրեցեալ ծնողաց,
քրոջ, եղբօր եւ հարազատներուն՝
**ՀՌԻՓՍԻՄԷ ՔԷՇԻՇԵԱՆԻ**
**(HRIPSIME KESHISHIAN)**
**ՄԱՐՏԻՐՈՍ ՔԷՇԻՇԵԱՆԻ**
**(MARDIROS KESHISHIAN)**
**ՀԵՐՄԻՆԷ ԵՒ ԳԷՈՐԳ ՔԷՇԻՇԵԱՆՆԵՐՈՒ**
**(HERMINE & KEVORK KESHISHIAN)**
**ՕՀԱՆՆԷՍ ՖԷՐԱՀԻ**
**(OHANNES FERAH)**
**ՓԵՓՐՈՆ, ՄԱՐԻՉԱ, ԶԱՐՈՒՀԻ**
**ՖԷՐԱՀՆԵՐՈՒ**
**(PEPRON, MARITZA, ZARUHI**
**FERAH)**
**ՄԱՐԻԱՄ ԿԻՒԼԻ**
**(MARIAM GUL)**
**ԵՒ**
**ՏԻԳՐԱՆ ՍԱՐԱՖԻ**
**(DIKRAN SARAF)**
**Ինչպէս նաեւ՝**
**ՄԱՐԻԱՄ ԵՒ ԿԱՐԱՊԵՏ**
**ԷԼՄՕՔԵԱՆՆԵՐՈՒ**
**(MARYAM & GARABET ELMOKYAN)**
Հոգիներուն ի հանգիստ

Տիկ. Ռիցցա Աւետիսեանի եւ դուստրին՝ Հուրիի,
Տ. եւ Տիկ. Սիլվա եւ Միշէլ Լաֆէյի,
Տ. եւ Տիկ. Լենա եւ Ճօն Սթիմսընի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի
կատարուի իրենց սիրեցեալ ծնողաց եւ մեծ ծնողաց՝
**ՇԱՔԷ ԵՒ ՅԱՐՈՒԹԻՒՆ**
**ԱԶԻՐԵԱՆՆԵՐՈՒ**
**(CHAKE & HAROUTIOUN**
**AZIRIAN)**
Հոգիներուն ի հանգիստ
Ինչպէս նաեւ՝
**ԱԶԻՐԵԱՆ, ԱՒԵՏԻՍԵԱՆ,**
**ԵԱԼԸՆԸԶԵԱՆ ԵՒ ԱՒԵՏԻՔԵԱՆ**
**(AZIRIAN, AVEDISSIAN, YALENEZIAN,**
**& AVEDIKIAN FAMILIES)**
Գերդաստաններու համայն ննջեցելոց
հոգիներուն ի հանգիստ

Տիկ. Արաքսի Սաղլամի եւ զաւակներուն,
Տ. եւ Տիկ. Աբրահամ եւ Մելիսա Սաղլամի եւ
զաւակներուն,
Օրդ. Եփրաքսի Սաղլամի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի
կատարուի իրենց սիրեցեալ մօր, մեծ մօր, մեծ մեծ մօր՝
**ՆՈՒՐԻՑԱ ՍԱՂԼԱՄԻ**
**(NURITSA SAGLAM)**
Մահուան առաջին տարելիցին  առիթով

## Sunday, October 27, 2019

## Feast of the Discovery of the Holy Cross

The Feast of the Discovery of the Holy Cross is one of the four feasts dedicated to Christ's Holy Christ.

In 327 AD Heghineh, the Mother of the Byzantine King Kostandianos, visits Jerusalem with the aim to search the holy Cross of the lord. A Jew, named Judas, helps the King's mother to search the site where Christ was crucified – Golgotha. In the result of searches the wooden crosses of Christ and the two criminals crucified together with him are found. For recognizing the Lord's Cross, the remains of a young man are put on the crosses in turn. On one of the crosses the young man rises to life and thus the Lord's Cross is identified. After that miracle the Jew converts to Christianity and later becomes the Bishop Cyril of Jerusalem.

After the discovery of the Holy Cross Heghineh renovates the Holy Places of Jerusalem and builds the Church of Holy Resurrection of Golgotha, where later the Lord's cross is installed.

The Armenian Apostolic Church celebrates the Feast of the Discovery of the Holy Cross on the Sunday during the period October 23-29.



ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

**DON À L'ÉGLISE** | **DONATION FOR THE CHURCH**

## CHURCH DONATIONS

FOR THE PERIOD OF: SEPTEMBER 25- OCTOBER 27, 2019

## RENOVATION FUND RAISING CAMPAIGNE:

Church Exterior Walls Fundraising Renovation

New Donators:

Foundation Vartan & Lise Toroussian $10,000

Mr. & Mrs. Avedis & Arshaluys Djihanian $3000

Tekeyan Cultral Centre $2000

Armenian Liberal Democratic (Ramgavar) Party $2000

Mr. & Mrs. Onnik & Marie Pilafian $1000 (2)

Mr. & Mrs. Antranik & Armine Sirinyan $500 (2)

Dr. & Mrs. Archavir & Nadya Gundjian $1000

Dr. Vilma Derbekyan $1000

Mr. Carlo Gurunlian $1000

Mr. & Mrs. Murat & Zivart Takvorian $1000

Mr. Arto Manoukian $1000

Mr. & Mrs. Garo & Michelle Boghosian $1000

Mr. & Mrs. Nurhan Cankul $1000

Mr. Vahe Keresteciyan $1000

Mr. & Mrs. Ara & Mary Gerikyan $500

Mr. & Mrs. Horen Mirasyedi $500

Mr. Berdj Araz $500

Mrs. Perkruhi Meremetci $500

Mr. & Mrs. Agop & Taline Gurunlu $500

Mr. Dikran Husseindjian $500

Mr. & Mrs Murat Ozcanian $500

Mrs. Aida Karibian $500

Mrs. Aida Tamigian $500

Mr. Zaven Kazandjian $500

Mr. & Mrs. Artur & Marine Markosyan $300

Mrs. Alis Afker $300

Dr. Arman Topakian $250

Mrs. Anoush Keoprulian $200

Mrs. Vartouhie Balian $200
Canadian Ecumenism Centre $200
Mrs. Vasken Dakessian $100
Mr. & Mrs. Robert & Zarouhie Kechayan $100
Mrs. Adriana Bara $100
Mr. & Mrs. Garbis & Silva Ferah $100 (2)
Mr. & Mrs. Arsen & Ayda Unlusoy $100
Mrs. Vehanoush Yessayan $50

**Offline donations & Online donations Total: $4562**

**Grand Total: $192,577,33**

**CHURCH:**

Mr. Henrik Mkrtumyan $150.

**ANNUAL BAZAAR:**

Mr. & Mrs. Garo & Nevart Paragamyan $30.

**IN LIEU OF FLOWERS DONATIONS MADE:**

**THE LATE HAIG MANOUKIAN:**

Sonia, Arek & Chirac Manoukian $200, Mr. Perry Shak, Alice & Sonia Soghomonian $100, Mr. & Mrs. Zaven Gudsuz, Mr. & Mrs. Avedis & Suzanne Atamian, Mr. Hovsep Yemenidgian, Mrs. Ritta Mausourati, Mrs. Marie Margossian, Mr. Nitesh Arora, Mr. & Mrs. Garbis & Hasmik Aposhian, Mr. & Mrs. Gaetan & Hermine Dimaria, Mr. Avedis Djihanian, Mr. & Mrs. Armand Benohanian $50, Mr. Karl Tcherkezian, Mr. Dikran Husseindjian $40, Mr. Aram Der Movsesyan $30, Mrs. Anoush Keoprulian, Miss Shoushan Aroyan, Miss Varsenig Nazoyan $25, Mr. & Mrs. Harout & Seza Nalbandian, Miss Takouhi Aghazarian, Mrs. Terwanda Yakoubian, Mrs. Sonya Djandjikian, Mrs. Mariana Arakelian,
Mrs. Tamara Tachtchian $20.

**THE LATE ARTO TCHAKMAKTCHIAN:**

Mrs. Tracy Berberian $100

**HOKEHANKISD:**

**THE LATE YERVANT BHECHAKEDJIAN:**

Mr. & Mrs. Asbed & Mirna Bajakian $100.

**THE LATE NARTUHI FERAH SARAF:**

Mr. Manuk Elmokyan $100, Mr. & Mrs. Shahan Gazeryan, Mr. Vrej Nigogossian, Mr. Levon Senoglu, Mrs. Germaine Koleoglu, Mrs. Seta Kurkciyan $50, Mrs. Hilda Kepekci, Mr. & Mrs. Roupen & Meline Arsever, Mrs. Vartouhi Torossian $40, Mr. & Mrs. Minas & Verjine Asaduryan, Mr. & Mrs. Hazar & Hasmik Met $30, Mrs. Seta Artokun $20.

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Եկեղեցի

**Cathédrale Arménienne St-Grégoire l'Illuminateur**

**St. Gregory the Illuminator Armenian Cathedral**

Կազմակերպութեամբ՝

**ՏԻԿՆԱՆՑ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ**

# ՏԱՐԵԿԱՆ

# ՊԱԶԱՐ

Պատուոյ Հիւր՝
Ազնուափայլ Տիկին Հենիքա Սօզքէս

**Շաբաթ 26 եւ Կիրակի 27 Հոկտեմբեր 2019**
**ժամը 10:00-էն**

Ձեռային աշխատանքներ
Անուշեղէններու եւ խմորեղէններու վաճառք
Երկու օրերուն՝ ճաշի սպասարկութիւն

Յաւելեալ մանրամասնութեան համար հեռաձայնել
Եկեղեցւոյ գրասենեակ՝ (514) 279-3066 թիւին

# Ուշադրութիւն

Մեր սիրելի հաւատացեալներուն կը տեղեկացնենք
թէ Տարեկան Տօնավաճառ Պազարի զոյգ օրերուն

## Շաբաթ 26 եւ Կիրակի 27

## Հոկտեմբեր 2019-ին

Ձեր ինքնաշարժերը ապահով կերպով կրնաք
կանգնեցնել Bernard փողոցին վրայ գտնուող

## Centre Education des Adultes Outremont

դպրոցին կայանատեղիին (parking)-ին մէջ:

Մանրամասնութիւնները եւ հասցէն կարելի է տեսնել
ստորեւ կցուած յայտարարութեան մէջ:

Շնորհակալութիւն

Ծխական Խորհուրդ

## ՀԱՅՑ. ԱՌԱՔ.Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ
## ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ
### CATHÉDRALE ARMÉNIENNE ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR
### ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008 / stgregorychurch@gmail.com

## ԻՆՔՆԱՇԱՐԺԵՐՈՒ ԿԱՅԱՆԱՏԵՂԻ

Սիրելի հաւատացեալներ,
հաճոյքով կը տեղեկացնենք, թէ յետայսու, ամէն Կիրակի,
ձեր ինքնաշարժերը կրնաք կանգնեցնել
Bernard փողոցին վրայ գտնուող
«Centre d'Éducation des Adultes Outremont» դպրոցի
կայանատեղիին (parking) մէջ,
սկսեալ առաւօտեան ժամը 10-էն մինչեւ կ.ե. ժամը 3:




## PARKING

Dear parishioners, we would like to inform you that every Sunday you will be able to park your cars at the parking of the school Centre d'Éducation des Adultes Outremont on Bernard Street, from 10:00 am – 3:00 pm

- From our Church turn right on Bernard stret, go 1 block.
- Turn left on Dollard Blvd. all the way to the 'Centre d'Éducation des Adultes Outremont. The parking space is on your right

Adress : 500 Boulevard Dollard, Outremont, QC H2V 3G2

# ՄՈՆԹՐԷԱԼԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ
# ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ՏԱՃԱՐ




ՀՈՎԱՆԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ՝

ԳԵՐՇ. Տ. ԱԲԳԱՐ ԵՊՍ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆԻ

ԱՌԱՋՆՈՐԴ ԳԱՆԱՏԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ

## **ՀԱՄԵՐԳ** ՆՈՒԻՐՈՒԱԾ

## ՀԱՆՃԱՐԵՂ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ՝ ԵԿԵՂԵՑՒՈՅ ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ

**ԾՆՆԴԵԱՆ 150 ԱՄԵԱԿԻՆ**

Ելոյթ կ'ունենան հանրածանօթ արուեստագէտներ՝



Սաշա Ճիհանեան



Սարգիս Պարսէմեան



ԳոհարՄանուէլեան

**Շաբաթ, 30 Նոյեմբեր 2019 երեկոյեան ժամը 8-ին**

**Եկեղեցւոյ մէջ:**

Հանդիսութեան աւարտին՝ հիւրասիրութիւն «Վաչէ Յովսէփեան» սրահին մէջ:

Մանրամասնութեան համար հեռաձայնել

(514) 279-3066

Ողջ հասոյթը կը յատկացուի Վերանորոգութեան Դրամարշաւին:

Մուտքի նուէր՝ $30


615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008/ stgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

49-րդ/th

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

# ՏԱՐԵԴԱՐՁ

Մոնթրէալի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ Գնման, Օծման եւ Անուանակոչութեան

# ANNIVERSARY

of the St. Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal

---

Հովանաւորութեամբ

**Գերշ. Տ. Աբգար Եպս. Յովակիմեանի**

Բարեխնամ Առաջնորդ Գանատահայոց Թեմին

---

**Կիրակի, 15 Դեկտեմբեր 2019**

**Sunday, December 15th, 2019**

Սկիզբ Ս. Պատարագի առաւօտեան ժամը 10:30-ին

---

Պատարագիչ՝

**Առաջնորդ Սրբազան Հայր**

---

Յաւարտ Ս. Պատարագի

Տօնական ճաշկերոյթ եւ Գեղարուեստական Յայտագիր
«Մարի Մանուկեան» սրահին մէջ

**Anniversary Banquet & Cultural Program in «Marie Manoogian» Hall**

---

Տեղերու ապահովման համար հաճեցէք հեռաձայնել
եկեղեցւոյ գրասենեակ՝ (514) 279-3066
Մինչեւ 10 Դեկտեմբեր 2019

**Please call to reserve (514) 279-3066**
**till December 10th, 2019**



## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Տաճարի Կիրակնօրեայ Վարժարանը կարիքն ունի ուսուցիչներու դասաւանդելու համար գծագրութեան դասընթացքներ:

Հետաքրքրուողներէն կը խնդրուի հեռաձայնել քարտուղարութեան՝ (514) 279-3066
կամ տուեալները ուղարկել հետեւեալ ե-հասցէին՝ stgregorychurch@gmail.com

Շնորհակալութիւն

## Շաբթուայ խորհրդածութիւնը

- **Եթէ չենք կրնար այնպիսին ըլլալ, ինչպէս որ ենք, եթէ միայն կը կեղծենք մեր գոյութիւնը, այդ պարագային կը դառնանք շինծու, կեղծ արարածներ: Իսկ այդ տեսակ անձնասիրութեան հետ Աստուած ոչինչ կրանյ ընել:**

  **Անտոն Մեթրոբոլիթ Սուրոժացի**

- **Գլխաւորը այն չէ թէ ի՞նչ ենք մենք, երբ կը կարդանք Ս. Գիրքը, այլ ի՞նչ ենք մենք երբ կը փակենք զայն«:**

  **Սիմէոն Աթոսացի**

# ԵԿԷ՛Ք ՊԱՅԾԱՌԱՑՆԵՆՔ
# ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ




Եկեղեցոյս պայծառութեան եւ առաքելութեան յարատեւման նախանձախնդիր մեր սիրելի հաւատացեալներ,

Սիրով կը յայտնենք, թէ մեր եկեղեցին կարիքն ունի հետեւեալ իրերուն.-

- Արծաթեայ Սկիհ
- Օդորակիչի անհրաժեշտ սարքաւորման (Air Conditioner)
- Ս. Սեղանի ոսկեգոյն ասեղնագործ ծածկոց
- Հոգեւորականաց   շուրջառներ եւ հողաթափեր
- Սկիհի ծածկոցներ եւ Աւետարանի բռնիչ
- Մեծ Պահքի կամ Աւագ շաբթուան յարդարանք (սեղան եւ ծածկոց)
- Յիսուս Մանկան մսուր
- Եկեղեցւոյ տօնածառ
- Ճրագալոյցի եւ Տեառընդառաջի համար նախատեսուած դուրսի մոմեր
- Ջրօրհնէքի Սափոր
- Ս. Խորանի 2 մեծ վարագոյր կարմիր եւ սեւ

Արդ, անոնք որոնք կը փափաքին իրենց սրտաբուխ նուիրատուութեամբ մասնակից դառնալ եկեղեցւոյ սուրբ առաքելութեան, հաճին կապ պահել եկեղեցւոյ հովիւին կամ քարտուղարութեան հետ (514) 279- 3066:

«*Այս երկրի մէջ ցանէ՛ քու հացդ, որպէսզի երկնքի մէջ զայն հարիւրով պտուղ տուած գտնես*»:

«Հոգեւոր հայելի»

Կանխայայտ շնորհակալութեամբ,

Հոգեւոր Հովիւ եւ Ծխական Խորհուրդ



# Մեր երեխաներուն համար

Պահպանե՛նք ժառանգութիւնը, կերտե՛նք ապագան

Մոնթրէալի Սբ.Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ եկեղեցին շտապ վերանորոգման կարիքն ունի։

Ճարտարապետական ուսումնասիրութիւնները ի յայտ բերին թէ եկեղեցւոյ արտաքին շաղախներն ու ենթակառոյցները անմիջական վերանորոգման կը կարօտին:Յառաջիկայ հինգ տարիներու ընթացքին, գաղութս պէտք է հաւաքէ բաւական նշանակալի գումար մը:Իսկ այս առաջին փուլը կը կարօտի $ 250,000 ի:

Շտապ։

Եկէ՛ք միասնաբար ապահովենք մեր գաղութի ապագան։



## POUR NOS ENFANTS

Pour protéger notre héritage : Pour bâtir notre future

L'église St. Grégoire l'Illuminateur de Montréal a un besoin URGENT d'initier et d'exécuter des restaurations majeures à la structure de la bâtisse

Les études architecturales et d'ingénierie ont conclu que la bâtisse de notre élégante église cathédrale de 90 ans nécessitera pour les cinq (5) années prochaines d'importantes restaurations de la maçonnerie de pierre sur son extérieur, des supports des vitraux plombés des fenêtres dans son intérieur et d'autres modifications structurelles et ceux-ci requièrent un montant assez élevé. La phase 1 de ses travaux estimés à $250,000 a déjà démarré

Svp donnons-nous la main pour ramasser les fonds nécessaires et assurer le succès de cette initiative communautaire

Svp donnons-nous la main pour ramasser les fonds nécessaires et assurer le succès de cette initiative communautaire

ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

Օրհնութեամբ Գանատահայոց Թեմի Բարեխնամ
Առաջնորդ Գերաշնորհ
Տէր Աբգար Եպիսկոպոս Յովակիմեանի

Մոնթրէալի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ
Մայր եկեղեցւոյ

«Կոմիտաս» Դպրաց Դասը
Յունուար **2020**-ին կը նախատեսէ
կազմակերպել





## «ԿԱՏԱԿ ԵՐԳ»

խորագրով երեկոյ մը

Յայտագիրը կը պարունակէ.

- հայկական ժողովրդական, սիրային եւ կատակերգի ձոխ երգացանկ մը, որ պիտի ներկայացուի գեղարուեստական բեմադրութեամբ:
- Յայտագրի ընթացքին պիտի մատուցուի հայկական աւանդական ուտեստ եւ հայկական գինի։

Յայտագրին մաս կազմել փափաքողները
մինչեւ **15** Հոկտեմբեր **2019**
կրնան դիմել «Կոմիտաս» Դպրաց Դասի խմբավար
Տիար Սարգիս Պարսեմեանին՝ **Barsemians@Gmail.com**

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցի

St. Gregory the Illuminator Armenian Cathedral

# ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ԶՐՈՅՑ



## Տ. ԴԱՒԻԹ ՔՀՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆԻ ՀԵՏ

**Ամէն Հինգշաբթի**
**երեկոյեան՝ ժամը 7:00-ին եկեղեցւոյ մէջ**

**Études bibliques et discussions**
**avec le R.P David Margaryan**

**Chaque Jeudi à 19hoo**
**à l'église**

Կը հրաւիրենք մեր սիրելի հաւատացեալները մասնակից ըլլալու Աստուածաշնչական նիւթերուն

**Nous invitons nos chers fidèles à participer à ces séances d'interprétations bibliques.**

Սուրճի եւ թէյի հիւրասիրութիւն

**Une collation de café et de thé est servie**

Ի սրտէ կ'ակնկալենք բոլորին ներկայութիւնը

**Nous comptons sur votre participation massive**

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008/ stgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

## ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ
## ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN
## ԿԻՐԱԿԱՄՏԻՑ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ



Սիրով կը յայտնենք, թէ
Շաբաթ, 26 Հոկտեմբեր 2019-ի
երեկոյեան ժամը՝ 5-ին, երեկոյեան
(Կիրակամտից) ժամերգութիւն պիտի
կատարուի Մոնթրէալի Սբ. Գրիգոր
Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր
Եկեղեցւոյ մէջ։

Այսու կը հրաւիրենք մեր հաւատացեալները
ներկայ գտնուելու հոգեպարար այս
արարողութեան։

***Օրհնութեամբ՝***
***Տ. Դաւիթ Քհնյ. Մարգարեան***

Յարգելի՛ ծնողներ, կը տեղեկացնենք, որ Կիրակի, Սեպտեմբեր 8-ին նոր որակով եւ ընդլայնուած ծրագիրով կը մեկնարկէ Մոնթրէալի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ կիրակնօրեայ վարժարանի 2019-2020 ուսումնական տարին:

Կիրակնօրեայ վարժարանը նոր ուսումնական տարեշրջանին կ'առաջարկէ հետեւեալ դասընթացքները.

1. Հայոց լեզու
2. Հայոց պատմութիւն եւ հոգեւոր գիտելիքներ
3. Մանկապատանեկան երգչախումբ
4. Շախմատ (ճատրակ)
5. Նկարչութիւն
6. Խօսքի մշակոյթ (թատրոն, ասմունք):

Կը խնդրենք ընդունիլ առ ի գիտութիւն, որ կատարուած են որոշակի փոփոխութիւններ Կիրակնօրեայ Վարժարանի դասընթացքներու կազմակերպման ընթացքին մէջ.

- դասընթացքները պիտի սկսին ժամը 10:30-ին եւ կ'աւարտին՝ ժամը 14:00-ին:
- դասընթացքներու համար պիտի գանձուի խորհրդանշական գումար՝ 1 փոքրիկի պարագային ամիսը 15 տոլար, երկուքի պարագային՝ 25 տոլար, իսկ երեքի պարագային՝ 33 տոլար:

Միաժամանակ կը տեղեկացնենք, որ ներկայիս կը քննարկուի նաև փոխադրամիջոցի ապահովման հարցը (լրացուցիչ վճարման դիմաց):

Ձեր բոլոր առաջարկները կրնաք ներկայացնել Կիրակնօրեայ Վարժարանի պատասխանատուներուն անձամբ կամ հետեւեալ Ե-հասցեներով (e-mail)՝

haykpetrosyan80@gmail.com կամ alinabezhanyan1@yahoo.com:

Փոքրերու արձանագրութեան համար հեռաձայնել՝

Ալինա (438) 889-8167  Հայկ  (514) 619-7098

